«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Նախադպրոցականի աշխատանքային դաստիարակության գործընթացի կազմակերպումը, որն ուղղված է սանի մոտ աշխատելու պահանջմունքի և աշխատասիրության ձևավորմանը:

Դաստիարակ՝ Էլիզա Ռաֆիկի Պողոսյան

Մանկապարտեզ՝ «Ոսկեհասկի մանկապարտեզ» ՀՈԱԿ

Գյումրի 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Գլուխ 1 Աշխատանքային դաստիարակության էությունը նախադպրոցական տարիքում……4

Գլուխ 2 նախադպրոցականի աշխատանքային դաստիարակության գործընթացի կազմակերպման խնդիրները……6

Եզրակացություն……11

Օգտագործված գրականության ցանկ……12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դաստիարակության նպատակի հարցը հուզել է բոլոր ժամանակների մանկավարժներին, քանի որ նպատակն է որոշում և թելադրում մանկավարժական գործունեության բնույթն ու նպատակները: Դաստիարակության ժամանակակից տեսությունն առավելապես կարևորում է դաստիարակության գործընթացի նպատակադրումն ուղղված կոնկրետ վերջնադրույքի ստացմանը, որն իր մեջ ներառում է մարդկության հավաքական արժեքները և պետք է համապատասխանի հասարակության գերակա նպատակներին և ժամանակի պահանջներին:

Դաստիարակության համակարգն իրենից ներկայացնում է դաստիարակության տարբեր բաղադրիչների ամբողջություն, որտեղ աշխատանքային դաստիարակությունն ունի կարևոր և բացառիկ նշանակություն: Աշխատանքը, իբրև մարդկային կարևոր գործունեություն, ձևավորվում է նախադպրոցական տարիքում: Երեխան սիրում է աշխատել և փորձում է ինքնահաստատվել ինքնուրույն աշխատանքային գործունեության միջոցով: Նախադպրոցական տարիքում երեխայի աշխատանքային գործունեությանը բնորոշ են առանձնահատկություններ. աշխատանքը չի ստեղծում նյութական արժեքներ, աշխատանքի խաղային բնույթը, իրադրային և ոչ պարտադիր բնույթը, արդյունքի պայմանավորվածությունը մեծահասակների օգնությամբ, աշխատանքային գործունեության դրդապատճառների տարերային բնույթը և այլն:

Նախադպրոցականի աշխատանքային դաստիարակությունը հիմնականում ուղղված է սանի աշխատանքային գործունեության կազմակերպմանն ու իրականացմանը, որի ընթացքը բնութագրում է նախադպրոցականի աշխատանքային դաստիարակության բուն իմաստը: Աշխատանքային դաստիարակությունը նպաստում է նաև սանի մոտ անձնային կարևոր որակների դաստիարակմանը:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել նախադպրոցականի աշխատանքային դաստիարակության գործընթացի կազմակերպումը և հիմնավորել այդ գործընթացի դերը սանի մոտ աշխատանքի պահանջմունքի և աշխատասիրության ձևավորման գործում:

Առաջադրված է հետևյալ վարկածը. Եթե աշխատանքային կառուցողական գործունեությունը լինի նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման համար կարևոր միջոց, ապա այդ տարիքին բնորոշ երեխայի զարգացումը կլինի բնականոն և ներդաշնակ:

ԳԼՈՒԽ 1

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Հանրագիտարանում աշխատանքը սահմանվում է որպես մարդուն բնորոշ նպատակադրված գործունեություն՝ ուղղված սեփական կարիքների և պահանջմունքների բավարարմանը՝ առարկայական աշխարհի ստեղծագործական վերափոխման եղանակով: Աշխատանքը բնական պահանջմունք է, մարդկային գոյատևման ձև: Մ.Խորենացին նշում էր, որ աշխատասիրությունը մարդկային բարձր արժանիքներից է, նրա շնորհիվ է մարդը կատարելության հասնում: Աշխատանքը երջանկության և հաջողության աղբյուր է, չարիքը վերացնելու և մարդուն կատարելության առաջնորդելու միջոց: Աշխատասիրությունը հնարավար է դարձնում առաքինությունների իրականացումը, և այսպիսով, ինքն էլ մի տեսակ առաքինություն է՝ որոշ իմաստով նույնիսկ ավելի բարձր, քան մյուս առաքինությունները: Կ.Դ. Ուշինսկին ասում է . << Միայն աշխատանքի ներքին կենարար ուժն է իբրև աղբյուր ծառայում մարդկային արժանապատվության, դրա հետ միասին նրա բարոյականության և երջանկության համար>>: Իսկ Ղ.Աղայանը գրում էր, որ աշխատասիրությունը բոլոր առաքինությունների մայրն է, ինչպես ծուլությունը ծնող է ամենայն մոլորության: Պատկերավոր են նաև Ռաֆֆու խոսքերը. <<Գանձ գտնողի աղքատի որդիքը սոված կմեռնեն, իսկ քրտինքով վաստակած հացը չի սպառվի>>:

Աշխատանքը՝ իբրև մարդկային կարևորագույն գործունեություն, ձևավորվում է նախադպրոցական տարիքում: Երեխան սիրում է աշխատել և փորձում է ինքնահաստատվել ինքնուրույն աշխատանքային գործունեության միջոցով: Երեխայի աշխատանքը չի ստեղծում նյութական բարիքներ, հաճախ նույնիսկ չի տալիս արդյունք, բայց ունի լուրջ դաստիարակչական նշանակություն: Աշխատանքի միջոցով նա ավելի է մտերմանում մեծահասակների հետ, ճանաչում է սեփական հնարավորությունները, համագործակցում մեծահասակների հետ, սովորում պլանավորել և վերահսկել սեփական գործողությունները, ձեռք է բերում կյանքի հմտություններ:

Երեխայի աշխատանքը նման է խաղի: Նրան հետաքրքիր է ոչ թե աշխատանքի արդյունքը, այլ ընթացքը, որն իր բնույթով իրադրային է: Երեխայի աշխատանքը ուղղված է ինքնահաստատմանը և ինքնահիրացմանը: Նախադպրոցական տարիքում երեխայի աշխատանքային գործունեությանը բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

- աշխատանքը չի ստեղծում նյութական արժեքներ,
- աշխատանքի խաղային բնույթը,
- աշխատանքային հմտությունների ձևավորումը, որոնք խիստ մասնագիտակցված չեն և կրում են ընդհանուր բնույթ,
- աշխատանքի իրադրային և ոչ պարտադիր բնույթը,
- աշխատանքի արդյունքի պայմանավորվածությունը մեծահասակների օգնությամբ,
- աշխատանքային գործունեության դրդապատճառների տարերային բնույթը:

Երկար տարիներ նախադպրոցականի աշխատանքային դաստիարակության համակարգում գերակայող է եղել այն կարծիքը, թե երեխայի աշխատանքային դաստիարակության հիմքում ընկած է մեծահասակների աշխատանքի հետ ծանոթացնելու սկզբունքը: Երեխան սովորում է աշխատել և հասկանում է աշխատանքի գերագույն նշանակությունը մարդկային կյանքում՝ միայն ընդօրինակելով և փորձելով նմանվել մեծահասակներին, հետևաբար և շուտ մեծանալ: Այս ճանապարհով է գիտակցվում երեխայի կողմից նաև աշխատանքային գործունեության արդյունքի հասարակական արժեքը: Սակայն վերջին տարիների հետազոտությունները խոսում են այն մասին, որ նախադպրոցահասակ երեխան ընդունակ է ինքնուրույն աշխատանքային գործունեության, կարող է պլանավորել և առաջնորդվել գործունեության ընթացքում սեփական դրդապատճառներով և նույնիսկ վերահսկել գործունեության ընթացքն ու արդյունքը: Աշխատանքային դաստիարակության նպատակը ոչ այնքան աշխատանքային գործունեության պատրաստի նմուշների ձևավորումն է, որքան աշխատանքի դրդապատճառների և ինքնուրույն աշխատելու ունակության զարգացումը: Աշխատանքային դաստիարակությունը կոչված է՝ նախապատրաստելու երեխային կյանքի դժվարությունները հաղթահարելուն, երեխայի սոցիալական հասունացմանը,

աշխատանքի արդյունքի հասարակական արժևորմանը, միևնույն ժամանակ այն նպաստում է անձնային որակների դաստիարակությանը: Ամփոփելով աշխատանքային դաստիարակության բաղադրիչների ձևավորման ընթացքը՝ համոզվում ենք, որ աշխատանքային գործունեության ձևավորման տրամաբանությունն ուղղված է աշխատելու ցանկության և կարողությունների զարգացմանը և աշխատանքի հանդեպ մտածված և պատասխանատու վերաբերմունքի ձևավորմանը: **Աշխատանքային գործունեության զարգացումը աշխատանքային դաստիարակության կարևորագույն խնդիրներից մեկն է:**

ԳԼՈՒԽ 2

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշխատանքային դաստիարակությունը մանկավարժական գործընթաց է՝ ուղղված աշխատանքի հանդեպ գիտակցված վերաբերմունքի, աշխատանքի արդյունքը գնահատելու կարողության, աշխատելու պահանջմունքի և աշխատասիրության ձևավորմանը: Նախադպրոցականի աշխատանքային դաստիարակության գրծընթացն ուղղված է երեխայի անձային հատկությունների ձևավորմանը՝ նրա կողմից ծավալող աշխատանքային գործունեության ընթացքում: Աշխատանքային դաստիարակության նշված սահմանումից, նպատակից և տրամաբանությունից երևում է, որ այս ուղղությամբ տարվող մանկավարժական աշխատանքը բաժանվում է, կարծես, երկու մասի և առանձնացվում է աշխատանքային դաստիարակության խնդիրների երկու խումբ: Առաջին խմբի խնդիրներն ուղղված են աշխատանքային գործունության բաղադրամասերի ձևավորմանը, որի արդյունքում ձեռք է բերվում գիտակից վերաբերմունք աշխատանքի և աշխատանքի արդյունքի նկատմամբ, ձևավորվում է աշխատելու ցանկություն: Երկրորդ խմբի խնդիրները կոչված են լուծելու անձնային զարգացման հիմնահարցեր և ուղղված են աշխատանքի ընթացքում անձնային որակների դաստիարակությանը:

Առաջին խմբին դասվող խնդիրներն են.

- Աշխատանքի հանդեպ հարգանքի և գիտակից վերաբերմունքի ձևավորումը:
- Աշխատանքային գործունեության կառուցվածքային տարրերի ձևավորմանը:
- Աշխատանքային կարողությունների և հմտությունների ձևավորումը:
- Աշխատելու պահանջմունքի զարգացումը:

Երկրրդ խմբին են պատկանում հետևյալ խնդիրները.

- Բարոյակամային հատկությունների ձևավորումը:
- Աշխատասիրության դաստիարակությունը:
- Սոցիալական հատկությունների և հմտությունների ձևավորումը:
- Աշխատանքային գործնական փոխհարաբերությունների ձևավորումը:

Աշխատանքային դաստիարակության խնդիրները նախադպրոցական տարիքում իրականացվում են երեխաների աշխատանքի ձևավորման կազմակերպման և ղեկավարման միջոցով։

Պարապմունքի պլան

Առարկան՝ Կերպարվեստ

Տեսակը՝ Դեկորատիվ

Խումբը՝ ավագ

Թեման՝ «Նախշազարդ սրբիչներ»

Նպատակը՝ երեխաներին ծանոթացնել հայկական զարդանախշերի հետ թղթե նախշազարդ սրբիչների միջոցով, զարգացնել երեխաների գունազգացողությունը, երևակայությունը, նպաստել գեղագիտական և աշխատանքային դաստիարակության զարգացմանը։ Հետաքրքրություն առաջացնել զարդանախշեր նկարելու հանդեպ։ Աշխատանքային դաստիարակության նպատակով օգնել երեխաներին գործադրելու լուրջ ջանքեր, ցուցաբերելու համբերատարություն աշխատանքի արդյունքին հասնելու համար։ Դաստիարակել կոկիկ և խնամքով աշխատելու ձգտում։

Անհրաժեշտ պարագաներ՝ հայկական զարդանախշեր կրող գորգերի, առարկաների նկարներ, վերատպություններ, նախշազարդ սրբիչներ, սպիտակ թղթեր, վրձիններ, ջրաներկեր։

Պարապմունքի ընթացքը

-Երեխանե՛ր, առհասարակ, ամեն ժողովուրդ էլ ստեղծել է իր զարդանախշերը՝ հիմնվելով ավանդույթների, սովորույթների, դիցաբանության վրա և հիմա դրանք վերհիշելու ամենատարածված ձևերն են հագուստը, զարդերը և աքսեսուարները։ Եվ մենք հայերս ևս ունենք մեր զարդանախշերը, որոնց նրբագեղությունը, նրբաճաշակությունը, բազմազանությունը միշտ էլ հետաքրքրել է հայկական արվեստը հետազոտողներին։ Մենք այսօր մեր պարապմունքին նկարելու ենք թղթե նախշազարդ սրբիչներ՝ կիրառելով բուսական և երկրաչափական զարդանախշեր։ Հայկական զարդանախշերը օգտագործվել են գորգագործության,

ճարտարապետության, ոսկերչության, խեցեգործության, ասեղնագործության և այլ բնագավառներում։

Այժմ մենք միասին վրձնի օգնությամբ կնկարենք գեղեցիկ սրբիչներ՝ հայկական զարդանախշերով։ Այդ ընթացքում երեխաներին ցույց տալով զարդանախշերի նկարներ՝ անհատական մոտեցմամբ երեխաներին սովորեցնում եմ պատկերել նախշեր թղթի վրա։ Երեխաներին սովորեցնում եմ նկարել բնօրինակից, ինչպես նաև պատկերացմամբ՝ ծաղիկներ, մրգեր, երկրաչափական պատկերներ։ Արտահայտչականորեն ցույց տալ հարաբերական մեծությունը, առարկայի դիրքը։ Հիմնվելով գույների իմացության վրա (կարմիր, կապույտ, դեղին, կանաչ դրանց երանգները)՝ կարողանալ ընտրել գունային գամմա՝ պատկերը հաղորդելու համար։ Վրձինը լավ հագեցնել ներկով։ Սկզբնական շրջանում երեխաները աշխատեցին բաց գույներով։ Միջառարկայական կապ ենք ստեղծել ֆիզկուլտուրայի հետ, որպեսզի ներկայացնենք սրբիչի կիրառման նշանակությունն ու կարևորությունը։

Ֆիզկուլտ դադար

Լվանում ենք ձեռքերը(ձեռքերը հպում են իրար)։

Վառվռուն մեր աչիկները(ցուցամատը զգույշ հպում են աչքերին)։

Փոքրիկ քիթիկն ու բերանը(ցույց են տալիս քիթնու բերանը։

Կլոր պայծառ մեր դեմքը(շրջանաձև մատը սահեցնում են դեմքի շուրջ բոլորը)։

Ֆիզկուլտ դադարից հետո երեխաների գունազգացողությունը զարգացնելու նպատակով կազմակերպել եմ «խաղ գույներով», որի ժամանակ երեխաները, լսելով իմ հրահանգը, արագ թղթի վրա գծում են այն գույնը, որը լսում են ինձանից։ Նշենք, որ պետք է ուշադրություն դարձնել դժվարացող երեխաներին, և հաջորդ օրը նրանց հետ կարելի է նրանց հետ կրկնել առաջադրանքը։

Պարապմունքին ներկա էին տնօրենը, մանկավարժ-մեթոդիստը, ովքեր բարձր գնահատեցին պարապմունքի անցկացման որակը և դիդակտիկ կարևոր նշանակությունը։

Ամփոփում՝ Ինչ ստացան երեխաները տվյալ պարապմունքից, ամփոփել եմ **ԳՈՒՍ** մեթոդով։

Գիտեմ, որ հայկական զարդանախշերը եղել են նաև հնում: Դրանք մեզ են փոխանցվել արվեստագետների աշխատանքների միջոցով: Զարդանախշերը լինում են գորգերի, կահուքի, հայկական տարազների, զարդերի վրա:	Ուզում եմ իմանալ այն, թե ինչպես կարող ենք բնական նյութերով պատրաստել զարդանախշեր, բնական կոմպոզիցիաներ:	Սովորեցինք նկարել նախշազարդ սրբիչներ՝ մրգային և ծաղկային զարդանախշերով: Սովորեցինք նաև, որ հայկական զարդանախշերը օգտագործվել են քանդակագործության, ճարտարապետության, խեցեգործության, ասեղնագործության մեջ: Սովորեցինք պլանավորել աշխատանքը, աշխատել, կոկիկ և խնամքով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԵՄ	ՈՒԶՈՒՄ ԵՄ ԻՄԱՆԱԼ	ՍՈՎՈՐԵՑԻ

Այսպիսով,

1. Աշխատանքային դաստիարակությունը՝ որպես նախադպրոցականի առաջատար գործունեություն, երեխայի զարգացման ու դաստիարակության լավագույն միջոցն է:
2. Աշխատանքի դերն ու նշանակությունը նախադպրոցականի կյանքում դիտվում են որպես երեխայի համակողմանի զարգացման, ինքնահաստատման կարևորագույն միջոց:
3. Ինչպես ցույց տվեց ինտեգրված պարապմունքի անցկացումը, կերպարվեստի դասի ընթացքում երեխան հաջողության զգացում է ունենում, երբ ներքաշվում է առաջադրանքի կամ իր իսկ սահմանած առաջադրանքի մեջ, ինչպես օրինակ՝ ընկերոջ հետ միասին ճանապարհ հարթել արգելքների միջով: Նման գործողությունները չպետք է սահմանափակվեն դաստիարակների, մեծահասակների կողմից՝ ճիշտ կամ սխալ, լավ կամ վատ գնահատականներով:
4. Երեխաները սովորում են՝

- զարգացնել խնդիրներ լուծելու իրենց հմտությունները,
- սոցիալական հմտություններ (հաղորդակցում, բանակցում, խնդիրների լուծում)
- հմտություններ զարգացման բոլոր ոլորտներում (իմացական, լեզվական, սոցիալ-հուզական, ֆիզիկական),
- հաճույք զգալ, ուրախանալ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ս. Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան, Նախադպրոցական մանկավարժություն, բուհական դասագիրք: Եր.<<Գասպրինտ>>, 2008, 288էջ:
2. Նախադպրոցական մանկավարժություն, Է. Ս. Ալեքսանդրյանի խմբագրությամբ, Երևան 1992:
3. Սարգսյան Լ., Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբում, Եր.,<<Զանգակ>> հրատարակչություն:
4. Մախչանյան Հ., Համագործակցության մանկավարժություն, Երևան, 1986:
5. Козлова С.А. Куликова Т. А. Дошколъная педагогика-Москва. 2000: